ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԱՌԹԻՎ

Սիրելի՛ դպրոցականներ, ուսանողներ, մանկավարժներ, կրթական ոլորտի ներկայացուցիչներ.

Շնորհավորում՝ եմ սեպտեմբերի 1-ի՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ: Թող ուսումնառության ողջ ընթացքը բոլորիդ համար լինի աշխարհաճանաչման ու լավագույն ինքնադրսևորման ժամանակաշրջան: Հատկապես ջերմորեն շնորհավորում եմ դպրոցի ու ԲՈՒՀ-ի շեմն առաջին անգամ ոտք դնողներին՝ նրանց մաղթելով լուսավոր ճանապարհ, արդյունավետ աշխատանք և բարձր առաջադիմություն: Իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն եմ հղում ու ցանկանում, որ նոր ուսումնական տարին բացահայտումների, հաջողությունների և նորանոր բարձունքների նվաճման տարի լինի: Միշտ հիշե՛ք, որ այն տարիները, այն ժամանակը, որ այսօր ունեք, այլևս չի կրկնվելու, դարձեք կրթված և խելացի մարդ ձեզ համար, մեր հայրենիքի և մեր հասարակության համար…

Բարի երթ ձեզ, սիրելի՛ երեխաներ